NMC
National Mortgage Company

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1 | Armenia 0010, Yerevan, Hanrapetutyan St., 22-7/1 | +37410 560974 | info@nmc.am | www.nmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎՎԿ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1

Հեռ.՝ (+374 10) 56 09 74 , Ֆաքս (+374 10) 56 07 41

էլ.փոստ՝ info@nmc.am,

ինտերնետային կայք՝ www.nmc.am

Հաշվետվություն թիվ 01, 24.03.2023

Համաձայն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ 2023թ. մարտի 22-ի թիվ ՏՊ-001-03/23 որոշման՝ Ընկերությունը 2023թ. մարտի 30-ին տեղաբաշխվելու է պարտատոմսեր՝ 4,500,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով Ծրագրային ազդագրի շրջանակներում, որը գրանցվել է ՀՀ ԿԲ 2022թ. նոյեմբերի 11-ի թիվ 1/555Ա որոշման համաձայն:
Կից՝ որոշումները:

AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2023 թվականի N ՏՊ-001-03/23

ք. Երևան

«Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկած անվանական արժեկտրոնային պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու մասին

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) 2023 թվականի մարտի 21-ի դիմումը «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Թողարկող) 4,500,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 12% արժեկտրոնային տոկոսադրույքով, 450,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման բաժնի ղեկավարի կողմից 2023 թվականի մարտի 22-ին ներկայացված եզրակացությունը.

Ղեկավարվելով Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.52) կետի ե) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 4,500,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 450,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMNMCCB2OER8 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով NMCCBO հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. մարտի 30-ին փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

ՀՀ Կենտրոնական բանկ նախագահի
Որոշում N 1/555Ա

11/11/2022

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն 2022 թվականի նոյեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ ծավալով՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 47 արձանագրություն)՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից 2022 թվականի նոյեմբերի 2-ին ներկայացված 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ ծավալով՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ